

ՁԱՆԿԱՆՈՒՄ ԳՐՈՒԹԻՒՆ

Պոչխարիոյ համար	12 Ժր
Տարեկան	6 "
Արժանեանքի համար տարեկան	15 "
Վերջին տարեկան	8 "

Անկախի համար	3 սյր.
Տարեկան	4.50 "

Մանուկներու տղա սոս քիւն երեսին համար 40 ս. իսկ յերթին երեսի համար 20 սանթրիմ է. երե հին տեղի անգլաներու համար 20 0/0 զեղչ կըլ լայ:

Վաճառի համար մ'ախ 10 սանթրիմ

ՁԱՆԿԱՆՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՐԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ԶՐ ՏՄՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՈՒԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒ ՈՐԵՐԸ

ՇՈՒՐԹՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԳ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՐԸ ՊԷՏԲ ԵՒ ԿԱՆՔՈՒԿ ՎՃԱՐԷ

Նախկ եւ որսով որկեզ հմբարդութեան հասցիից

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Արժանեանքի համար մեղքի
 (20 ՍԱՆԹԻՄ)
 Պոչխարիոյ համար մեղքի
 (15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք եւ չնկ տրուի

ՀԱՅԳԻԻ ԶՐԿԱՍ ԵՊԻՍԿՈՍ ՊՈՍՅԱԿԱՆ ՊԱՏԳՅԱՍԻՈՒՄԻ ԹԻՆԻ ԵՒՐՈՊԱՍ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ

Այս ամսի 9ին հայ եպիսկոպոսները բժիշկ Լորիս Մելիքովի հետ Լոնտոնի մէջ ընդունուեցան մարքեդ Լանստուէնէ. Եպիսկոպոսները Հայ թիկի կարգադրութեամբ պիտի այցելեն թոյր Պերլինի դաշնագիրը ըստորագրող արքունիքները՝ խնդրելով խոտապուծ բարենորոգումներու գործադրութիւնը, Լորիս Լանստուէնը իր շահագրգռութիւնը յայտնելով պատուիրակութեան նպատակի առթիւ, խոտապուծ է իր ազգեպետութիւնը գործ դնել, որպէսզի պատուիրակութիւնը ընդունուի նաեւ Երուսաղիմ քաղաքէն:

Կաթողիկոսի պատուիրակութիւնը անսխ 15ին ընդունուեցաւ նաեւ Քան գերպուրի արքեպիսկոպոսէն:

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԵՒ ՇԱՏԱԿԵԳԻՐԸ

- Մուշ Թիֆլիսի վրայով 4 օգ.
- Թուրքի Ին Անդրանիկը եւ ապստամբներու միւս պետերը եւ րոպական հրեպատոններուն ներկայացուցին յիշատակագիր մը, ուր ծրագրուած են հայկական վեց վիլայէթներու համար խոտապուծ բարենորոգումներու շնչին պահանջը:
 - Յիշատակագիրը հասեւեալն է. 1. Իրոյր տուրքերու ջնջումը 10 սարով:
 - Պատերազմական տուրքի բարձուր՝ ինչպէս եւ միւս բոլոր տուրքերու, բացի սաւանորդէն:
 - Կազմակերպութիւն սեղական հայ միլիցիայի:
 - Ինչոպիսի պահանջներու նըշանակումը հայերու մէջն ընտրուած եւ զինուած արագածիք հրազէններով:
 - Արդարադատական բարենորոգում, որով օրէնքի առաջ հաւասար ըլլան քրիստոնեաներն ու միւս բնիկները:
 - Ընդհանուր ներուժ:
 - Տեղական իրաւական մուտքի գործածումը տեղական պետերու վրայ:
 - Մեծ պետութիւններու կողմէ ոչ իրքական հպատակ քրիստոնեայ կառավարչի մը նշանակումը:
 - Կառավարչի մը նշանակումը այս յիշատակագիրը ընդունելով խոտապուծ են զայն յանձնել իրենց պատկանած զենքաներուն:

Հայ ապստամբները յայտարարեցին միեւնոյն ժամանակ թէ՛ իրենց չեն կրնար հանդուրժել Սասունի մէջ թիւրքական զօրանոցներ շինուելուն, եթէ թիւրք կառավարութիւնը կը հակառակի մեր այս ծրագրի գործադրումին:

Եւ վերջապէս ապստամբները իրենց յիշատակագրի պատասխանին կրօպանեն, վերսկսելու համար ապստամբական շարժում մը հայկական բոլոր գաւառներուն մէջ:

Կարողիկոսը, Անդրանիկը եւ Բաղապալիսը աշխարհը

Այժմ երբ կաթողիկոսի նամակի ուղղուած Պերլինի դաշնագրութիւնը ստորագրող պետութեանց, եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահին՝ վերլուծուած ուրիշ անդ տպուած է, այլեւս անգաղտնապանութիւն չէ այդ պայտօնական թուղթի գլխաւոր կէտերուն հետ ծանօթացնելը, զոր Մկրտիչ Սրիմանի զրկած պատուիրակութիւնը յանձնարարուած է սեղիկացնելու:

Ելմիսին ծերունին իր ժողովուրդի համար չը պահանջեր ազգային անկախութիւն, այլ միայն գոյութեան տարրական իրաւունքները. եւ գործադրումը եւ րոպական պետութիւններու կողմէ շատուցուելէ պահանջած բարենորոգումներու, որոնք են՝ արքունիք գրաւուած ինչքերու ետ ստացումը, գաղթականներու վերադարձը. ապա հաղորդակցութիւն երկուսն զորս եւ երկուսն ներս. Ընդհանուր ներուժ:

Քրիստոնեւ եւ չլրջեցներու զէմ ինքնապաշտպանութիւնը իրաւունք. Եւ րոպական վերաքննութիւն խոտապուծ բարենորոգումներուն գործադրութեան վրայ:

Նոյնպէս գիտենք «Տէլի Նիւս»ի մէկ հաղորդագրութեան, որ Ֆրանսական արտաքին գործոց նախարար պ. Տէլկաւէն յուլիսի 29ի կաթողիկոսի պատուիրակութեան հետ ունեցած իր երկար տեսակցութեան պահին յայտարարեց թէ՛ — «Ֆրանսական կառավարութիւնը ըրեր է ինչ որ կըր նար ընել, եւ իր ուժերը ներածին չար պիտի շարունակէ ընել հայ ժողովուրդը իր առաւապանքներէն ազատելու համար» — Եւ նախագահ Լուպէն, իր մեկնած օրը միեւնոյն պատուիրակութիւնն ընդունելով աճանհամակրական ցոյց է ըրեր յայտարարելով թէ՛ — «Ֆրանսական կառավարութիւնը իր ջանքը չը պի-

տի խնայէ Պերլինի դաշնագրի գործադրութիւնը ընդունել տալու համար — Ասկէ կերելի որ կաթողիկոսի պահանջները պետական այս երկու անձնաւորութիւններուն չափազանց չէ երեւացեր, Անոնք նոյնպէս չափազանց չեն իրաւացի մարքիդ Լանստուէնին, երբ իր կարգին ան ալ ընդունեց Սարաճեան եւ Այվաթեան արքեպիսկոպոսներն ու բըժիշկ Լորիս Մելիքովը. եւ աւելի քան հաւանական է որ Հոռոմի, Պերլինի, Վիէնայի եւ Վաշինկթոնի մէջ տարբեր տպաւորութիւն չը պիտի առաջացնեն կաթողիկոսի պահանջները:

Սակայն արքեպոս հայ ազգի պաշտօնական ամենաբարձր ներկայացուցիչը կարտայայտէ՝ իր բովանդակ հայրենակիցներու իզձը. Արքեպոս ֆէտայիները յուսահատուած այն մարտական եւ հոգեկան տանջանքներէն, որոնց անմիջական վկաններն իրենք են, կատաղած անդ մաքառուէն, որ զիրենք կը մղէ իրենց մէջ հազար անգամ աւելի հզօր ուժի մը զէմ՝ ամէն վայրկեան մահը այք առած, պիտի բաւական անան այլքան խելացի եւ չափաւոր պահանջներով: Այդ մասին այսօր այլեւս անկարելի է կասկածել: Անդրանիկի եւ րոպական հրեպատոններուն մատուցած յիշատակագիրը, զոր ասոնք խոտապուծ են իրենց պատկանած կառավարութեանց ներկայացնելու, ոչ մէկ գլխաւոր կէտի մէջ չը տարբերի կաթողիկոսի նամակէն, եւ այս աւազակապետի իրաւունքի պահանջները կրնային ստորագրուիլ ամենախաղաղ եւ ամենաբիշ պահանջկատ քաղաքագէտներու կողմէ:

Այն ութը յօգուածները, որ կը կազմեն հայ ապստամբապետներու մատուցած յիշատակագրի բովանդակութիւնը, եւ որոնք անհրաժեշտ են որ առանց յապաղումի գործադրութեան հայկական վեց նահանգներու մէջ, ասոնք ոչինչ նոր բան մը չեն պահանջեր. բացի այն ինչ որ արքեպոս կայ, ըլլայ նոյնիսկ թուրք կառավարութեան պաշտօնական թերթերու, եւ կամ ըլլայ պետութիւններու զանազան նօտաներու մէջ: Ինչ որ կը վերաբերի տուրքերուն, այն կարգադրութիւնը, որ վերջ առաւ Ջէյթունի վերջին ապստամբութեանը, միեւնոյն բաները կը բովանդակէ, եւ եթէ յօգուած մը կայ զայտայտի որ պահանջներու մասին պիտի տարագծիք հրազէններով՝ թերեւս առաջին անգամ ատիկա քիչ մը չափազանց թուի անոնց համար. որոնք այնտեղի գրութեան մասին շատ անկատար ծանօթութիւն

ունեն, սակայն կը բաւէ յիշել թէ՛ մակեդոնական նահանգապետ մը, որ վերջը մեծ վէզիր դարձաւ, Սակեդոնի մէջ առժամանակեայ կերպով ճիշտ նման գրութիւն մըն էր ստեղծեր. հասարակ խօսքով այս կը թարգմանուի — ճանաչել քիւրտերու եւ Չերքէզներու զէմ ինքնապաշտպանութիւնը իրաւունքը»:

Իսկ գալով Սասունի մէջ թիւրքական զօրանոցներ շինուելու մերժումին, ասոր համար աւելի քան պատճառներ կան, որով մերժուած աւելի օգտակար պիտի ըլլայ Չիւրուրները, ասոնց վրայ գումարած քիւրտերը հայ պիւլապիներուն կուտան մէկի անդ երկու թշնամի, ինչպէս նոյնը կը խոտապուծէր անցեալները պ. Տէլկաւէն. Եւ հողագործական երկրի մը մէջ քնակիչները չեն կրնար թոյլ տալ որ իրենց կանայք ու աղջիկները շուր կրտած ժամանակ, եւ կամ անառուները գաշտ տարած պահին համարիլէ զօրագունտի քմահանգըներուն մասնունին:

Քոնսթ Ապերտէնը, Լորտերու պատարի օգոստոս 12ի նիստին, իրաւացի կերպով յայտարարեց թէ՛ կանանց զէմ կատարուած բազմաթիւ եւ անպատիժ ոճիրները կը բաւէին ինչպէս ապստամբական շարժում մը յառաջ բերելը. ասոնց կարիք ըլլալու այդ բողոքները զբաւէն եղած իբր թէ՛ զրոյններով: Քանի իրերու այս պրոթիւնը շարունակուի, այնքան ալ խառնակութիւններ տեւական պիտի ըլլան, եւ շատ քնական է, որ Անդրանիկը եւ իր ընկերները արձանագրած են թէ՛ եթէ իրենց յիշատակագրի պատասխանը աննպաստ ըլլայ, ապստամբական շարժումը պիտի վերսկսի առանց յապաղումի:

Եւ յետեղ գերագոյն կոչ մը կայ Եւրոպային եւ բովանդակ քաղաքակիրթ աշխարհին. Պերլինի դաշնագրութիւնը ստորագրող պետութիւնները ամենէն առաջ պարտական են այդ կոչը լսելու: Ինչպէս որ միեւնոյն օրը քոնսթ Ապերտէնը ըսաւ թէ՛ ասոնք ասիական թիւրքերայի մէջ միայն վաճառականութիւնը չէ՛ որ պէտք է պաշտպանեն եւ կամ մասնաւոր շահերը, այլ 1878ի դաշնագրութիւնը զիրենք կը պարտաւորեցնէ իրենց վրայ առնելու ժողովուրդի պատասխանատուութիւնը, զորս իրենց պաշտպանութեան տակ առին այն ժամանակ, եւ եթէ թիւրք կառավարութիւնը երբեմնի ցոյցեր կընէ բարի կամեցողութեան, ատով սակայն չը պէտք է խաբուիլ, առաջին առթիւ իսկ, բնաջնջուի ծրագ

գիրը, վարկեան մը դարձեցուցած, նորէն արագութեամբ պիտի սկսի: Ահա թէ ինչու համար ցաւալի է, որ Ֆրանսայի եւ Անգլիոյ հիւպատոսները շտապեցան վազորոք հեռանալ ամենապառնական կէտերէ: Սահմանազիւսի ընդհարումները եւ Մուշի շրջանի դէպքերը անշուշտ իրենց հետեւանքները պիտի ունենան նաեւ Սասունի, ինչպէս նաեւ քիչ մըն ալ ամբողջ պետութեան մէջ: Համարը հրեշտային քաղաքականութիւնը վերսկսել է, եւ ատոր առաջին նշանը տուաւ հայկական թաղերը հրդեհելով: Ոչ ոք չէ մտազեպ մեծ հրդեհները՝ Հաճինի, Չէյթուէի, Մարաշի, Վանի՝ որոնց մէջ, գեոմտ անցեալին, միակ զոհերը հայերն եղան: Կարծես թէ, վերջն հրաբան մը, նորին սուլթանական մեծութեան ծառաները կը թելադրէ հայերու թաղերն ու շուկաները կըրակի տալ եւ հրդեհի պահին թալանել անոնց ստացուածքը:

Պիթիւսի եւ Տարտանելի հրդեհներէ յետոյ, «Տէլի նիւսը» այժմ կը հաղորդէ Մարզուանի հրդեհի սոսկալի մանրամասնութիւնները, Յուլիսի 2ին Մարզուանի մէջ 8 ժամուայ մէջ 360 տուն եւ 280 խանութներ այրուած են, եւ թուրք պաշտօնեաները ոչինչ չեն ըրեր կրակի առաջն առնելու, որովհետեւ միայն քրիստոնեաներու թաղն էր որ կայրուէր: «այս կեանքներու թաղն է, թողէք թող այրուի» — կը կրկնէին ամբողջ մէջ: Եւրոպական կառավարութիւնները եւ մասնաւորապէս ժողովուրդները շարաշար կը սխալուին այս բոլոր աղէտները տարբեր մեկնելով: Կործանումի աշխոյժ կամք մը կը գործէ Երլազի մէջ, եւ եթէ այդ կամքը երբեմն պայմանեալ առաջ կը խոնարհուի, ան կրպակէ պատրաստելով սպառազ քաղաքային վրիժառութիւնները:

Պ. Տեղիպոսի մեկ նամակը
Օգոստոս 1ի թուականով պ. Տէրկասէն, Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը, պ. Բիէր Բիարին համակրելի նամակ մըն զրկեր այն երեսուն հազար ֆրանքի համար, զոր ատկացուած էր Սասունի հայերուն բաժնելու Ֆրանսական փոխ-հիւպատոսի խնամքով: Նախարարը կը տեսնէ:

Ե Ր Կ Ի Ի Ղ Ը

(Շար. 643 թիւէն եւ վերջ)

Դանք հիմա երկրորդ այլալուծման: Անցեալ ձմեռ էր, Ֆրանսայի հիւպատոսին Արեւելեան անտառներու մէջ կը գտնուէինք: Գիշերը երկու ժամ կանուխ սկսաւ, ահաբա՛ն երկինքը մութ էր. գիւղացի մը կար հետս որ առաջնորդի տեղ կը ծառայէր ու քովն կը քալէր զատիվը ճամբէ մը, եղբիւններու կամարի մը տակէն, որոնք մարկավար հողմի մը հարուածներուն տակ կոռոնային անդադար: Անոնց զառաքելներուն ընդմէջէն կը տեսնէի խուճապող ամպերու գնացքը:

Ռելայեղ ամպեր որոնք կարծես սարսափէ մը կը փախչին: Մերթ ընդ մերթ հսկայ հով մը ամբողջ անտառը կը խոնարհեցնէր միեւնոյն

ղեկացնէ թէ՛ ինքը շատ երջանիկ պիտի ըլլայ, նպաստելով այդ տեսակ բարեգործական խնդրի մը, եւ թէ օվերոյիշեալ գումարը կարելի է յանձնել իմ նախարարութեան գրասենյակին: զոր հաւատարմարար պիտի հասցուի Վանի ֆրանսական ներկայացուցչին:—

Պաշտպանութեան Կոմիտէն

Կոմիտէ մըն է կազմակերպուելու, որու նպատակն է Ֆրանսական հիւպատոսներու միջոցաւ օգնութիւն հասցնել կոռորածի զոհերուն:

Այս կոմիտէն առայժմ բաղկացած է հետեւեալ անձերէ՝
Պ. Պ. Մարսելէն Պերտըլօ, Միւրի Բրիւքոմ ֆրանսական աղաքեմիայէն, Միշել Պրլալ, Բիէր Բիար, Ֆրանսոյի տր Բրեզանսէ, Տրեի Գոչէն, եւ Լըմիւր վարդապետ:

Թուրքական քանակները

Երեք ամիս կայ, Մերսինի թուրք բանտարկեաները յարձակելու էին հայ քաղաքական յանցաւորներու վրայ, որոնցմէ երկուքը սպաննելու էին, եւ երեքը վիրաւորելու: Ուրիշ բանաէ մը մեզ նման արարքի մը լուրերը կը հասնին, Մայիսի 15ին, երեկոյեան զէմ, թուրք եւ արաբ ոճրագործները նախապէս պատրաստուած եւ զինուած՝ յարձակեցան Յայ քաղաքական յանցաւորներու վրայ եւ անոնց դաշոյնի շատ մը հարուածներ հասցուցին: Երբ բանտարկեաները եկան, խեղճ հայ բանտարկեաները արդէն գետին էին փոռած: Այս հայերէն մէկի վիճակը, որ ութ վէրք է ստացեր ամէնէն յուսանատական է:

Նամակ Կովկասէն

Պետերսպոլից 29 յուլի:
Անշուշտ հեռագիրները ձեռք արդէն տեղեկացուցած կըլլան այն երկու քաղաքական սպանութեանց առթիւ, որոնք ամբողջ Կովկասը ցնցեցին, որոնցմէ մէ-

կը գեներալ Անտրիէէֆէն էր Գանձակի մէջ, եւ միւսը գնդապետ Բագասովսկին: առաջինը կառավարչի օգնական, եւ երկրորդը՝ շրջանական կառավարիչ: Այս երկուքն ալ ահաբեկիչներու ձեռքով գետին տապալեցան հասարակական հրապարակի վրայ, ամբողջ աչքի առաջ:

Այս անգամ ժողովուրդը չէ որ սարսափած է պայմաններու ուժով, այլ ինքն է, որ յղացեր է քաղաքական վրէժի անվախ գազալափարը, եւ «ամենագոր» կառավարութիւնն է որ այս անգամ ապշած է, չը կրնալով ինքնիրեն հաշիւ տալ թէ՛ ինչպէս այս միեւնոյն ժողովուրդը գեո երեկ խեղճ և հանդարտ, ամենակարճ ժամանակի մը մէջ դարձած է այսքան ապստամբ այսքան յանդուգն և ձեռներէց: Ես կառաւարիչներուն իմաստութեանը կը ձգեմ սահմանելու հոգը այս քաղաքական այլակերպութեան հոգեբանական պատճառները: Կը բաւականանամ միայն քանի մը խօսք բռնի այս զոհերու մասին, որոնց տրիւնը մեր հողը ներկեց, նոյն այն հողը, որ ամբողջ տարիներ շարունակ ծծեր է այնքան անմեղ մարդկանց արիւնը, որոնք զոհ են դարձած այս երկու անհետացողներուն:

Անտրիէզը, որ երեք տարիէ ի վեր Գանձակի կառավարչի օգնական էր, յանտնի էր դարձած, մահաւանգ այս վերջին ժամանակներս, իր հակահայկական տրամագրութիւններով: Այս գիրք փնտռող պաշտօնեան կուզէր հայկական հարցը, կամ աւելի լա՛ հայկական դիակները իրեն պատուանդան ծառայեցնել որու վրայ ելլելով ստանալ իշխան Գալիցիինէն շքանշաններ: Այն օրէն սկսած, երբ Գանձակի մէջ հաստատուեցաւ, Կովկասի կառավարչին ուղարկել էր երկու անգամ խեղաթիւրած, և

Նէին:

Վերջապէս, լոյս մը նշմարեցի ու քիչ յետոյ ընկերս գոռա մը բաղխեց, կանացի սուր աղաղակներ պատասխանեցին մեզի: Յետոյ մարդու ձայն մը, խորուկ ձայն մը, հարցուց:

«Ո՞վ է տն: Առաջնորդս իր անունը տուաւ: Անմոռանալի պատկեր մըն էր ասիկա: Ծերուկ մը սպիտակահեր, խօսական աչքերով, լեցուն հրացանի ձեռքը բռնած, մեզի կապաւէր խոհանոցին մէջտեղ կանգնած, իսկ երկու մեծ կտրիճներ, կացիններով զինուած զուռը կը պտիպանէին: Մտալ անկուսին մէջ երկու կիներ որոշեցի ծնրադիր, երեսներ ծածկելու համար պատին դարձած:

Հարցուցիք ինքզինքնիս: Ծերուկը վար դրաւ զէնքը եւ հրամայեց որ ինձի սենեակ մը պատրաստեյտոյ, տեսնելով որ կիները տեղերնուն չեն շարժիր, յանկարծ ըսաւ ինձի:

մէկ անգամ ալ ստայոգ տեղեկագիր երեւակայեալ հայկական դատադրութեան մասին: Այդ տեղեկագրերը իրարու կը յաղորդէին, սակայն առանց դաւադրութեան նշոյլ մը երեւալու: 1903 թուի սեպտեմբեր ամսին, Անտրիէզը կարծեց թէ վարկեանը հասնու է մեծ գործ մը ըստ նշանը, այդ հայ եկեղեցու ստացուածքներու յափշտակութեան ախուր օրերն էին: Հրացաններու գնդակները եկան երրորդութիւն մը կազմելու ժողովուրդի սուղի և վշտի հետ:

Գանձակի, ինչպէս նաեւ միւս բոլոր քաղաքներու մէջ հայերը խաղաղ ցոյցեր սարքելով իրենց բողոքի աղաղակները բարձրացուցին: Մոյց մը յետոյ, երբ ամբողջ ինքնարար կը ցըրուէր, Անտրիէզը, աչքերը կատաղութեան կարմրած, փրփուրը բերանին, հասաւ կողակներու և ոտիկան զինուորներու հետ միասին: Իր ուժին վրայ խելայեղ, հրամայեց իր մարդկանց ամբողջ զննաքը կանգնեցնել և անոր վրայ կրակ ընել: Ինք անձամբ անոնց օրինակ տուաւ ատրճանակի հարուածով հայ երիտասարդ մը սպաննելով: Կողակները վայրագութեամբ հետեւեցին անոր օրինակին և բազմաթիւ դիակներ գետին վրա ունեցան: Այս գործը, հրեշտային բարբարոսութեան այս ստարանը, ամբողջ քաղաքը սուղի մէջ դրաւ: Թափած արիւնը բնաւ երբէք չը խանդարեց իր խիղճը, այլ ընդհակառակը զինքը իր շաղկին սէջ քաջալերեց, և շարունակեց ալ ու ձախ ցուցադրել իր դէպի հայերը տաճած առելութիւնը: Հայերու և Պարսիկներու մէջ տոնելութիւն ցանց, հալածանքներ սկսան, բազմաթիւ մարդիկ ձեռքաւորեց և շատերը աքսորեց: այնպէս որ երբեմնի այս խաղաղ քաղաքը

— Կը տեսնէք պարոն, երկու տարի առաջ մարդ մը սպաննեցի, ճիշդ այս գիշեր, Անցեալ տարի մարդը զիս կանչեց: Այս գիշեր ալ իրեն կըսպասեմ:

Կրցածիս չափ ապանովեցի զինքը որ զիս երջանիկ զգալով որ այդ գիշերին հանդիպած եմ, եւ պիտի ներկայ գտնուիմ այս աւելորդապաշտական սարսափի տեսարանին: Պատմութիւններ պատմեցի եւ յաջողեցաւ գրեթէ բոլորն ալ հանդարտեցնելու:

Կրակարանին մօտ, ձեր շուն մը գրեթէ կոր ու մօրուաք—մին այն շուներէն զոր մէկ ծանօթիկ հետ կը շփոթես—կը քնանար քիթը թաթերուն մէջ առած:

Գուրբ կատաղի փոթորիկը կը ձեռնէր փոքրիկ իրճիթը, եւ զուս մը բացուած նեղ քառակուսի տակէ մը կայծակի լոյսով յանկարծ տեսայ ծառերու խառնիճաղաճ մը զոր քամին բերած էր:

Հակառակ բոլոր ճիգերուս կղզայի

աւելնակարճ միջոցի մէջ դարձուց սուգի և տառապանքի կեդրոն մը։ Թողնել այս արիւննու շտապաբար անպատիժ, կը նշանակէր զինքը իր սփռններուն մէջ աւելի քաջալերել, և պատիժը տրուելու։

Գնդապետ Բոգոսլովսկին, շրջանական կառավարիչ, աւելի մեծ ոճրագործ մըն էր, քան այն որու մասին խօսեցայ։ Այն օրէն, երբ Սուրմալուի կառավարիչ Նըշանախոսեցաւ, այն անբարտաշահները որ մը բնաւ չը տեսաւ, և այս շտապալուրից է։ Ասոր այս շրջանի կառավարիչ Նըշանախոսէին միայն հետեւեալ պատճառով, որ երբ այս հրեշը նորս կը գտնուէր, ցոյց էր տուեր կառավարութեան թէ ինքը անգուժ, կոպիտ և կատաղի պաշտօնեայ մըն է և ինչպէս կատարելագործուած հայատեաց մը։ Ասիկա ալ ու ձախ աւերմունք տարածեց, երբ գնեցաւ Պրեզէն Երեւանի նահանգապետն էր (Սուրմալուն Երեւանի մէջ շրջանն է)։

Պրեզէն Բոգոսլովսկին կը պաշտպանէր շնորհիւ այս վերջինի կնոջ գեղեցիկութեան... Պրեզէն թողուց Երեւանը, սակայն Բոգոսլովսկին շարունակեց մնալ իր պաշտօնի մէջ։ Պրեզէն աւելի բարձր պաշտօնի բարձրանալը աւելի նպատակաւոր եղաւ Բոգոսլովսկու համար, և ան սկսաւ այս ոճրագործը աւելի լաւ կերպով պաշտպանել, ատոր, ինչպէս նաեւ Պալիցիներն համար պէտք էր իր հրամաններուն հնազանդ պաշտօնեայ մը, անգուժ և ուսացնող, ինչպէս որ արդէն Բոգոսլովսկին ծախարկեցորէն կը յարմարէր։

Հայերը հալածելու համար, ասիկա դժոխային մեքենայութիւններ կը մտածէր, Հազարէն մէկ օրինակ մը։ Գեղեցիկ առաւօտ մը Իկտիբի բնակիչները քը-

նէն արթննալով սարսափով կիմանան թէ՛ գիշերը անյայտ մարդիկ նորակառոյց ուսուցողական կեդրոնի պատը քանդեր են։ Ասիկա մեծ սրբապղծութիւն մըն էր, սոսկալի անարգանք մը Աստուծոյ և Յարի գէմ, Գիտէ՞ք ինչ ըրաւ Բոգոսլովսկին, Իսկոյն հաղորդագրութիւն մը գրեց թէ՛ ուսուցողական կեդրոնը հայերն են քանդեր, որովհետեւ անոնք չեն կրնար հանդուրժել Իկտիբի մէջ ուսուցողական կեդրոնի մը կառուցումը։ Այս հաղորդագրի հետեւանքն եղաւ հայաժանքներ, ձերբակալութիւններ և աքսորներ։ Չորս հինգ տարի յետոյ այս խնդիրը անտիկալ կերպով պարզուեցաւ, որ հայերը անմեղ են եղեր այս գործի մէջ, և այս բանը ինքը Բոգոսլովսկին է մտածեր հայերու որոշեալ թիւ մը աքսորելուն պատուակ ծառայեցնելու համար։

Ամեն բան պարզուեցաւ, բայց Բոգոսլովսկին շարունակեց մնալ կառավարիչ հայերը հալածելու և շարժարեւու համար։ Յուսա, հատուած ժողովուրդը պանդատեցաւ Պալիցիներն, և երբ անգամ մը կովկասի ընդհանուր կառավարիչը իրեն յանձնուած երկիրը կ'այցելէր իրերու գրութեան հետ ծանօթանալու համար եկաւ Սուրմալու, ուր տեղական բնակչութենէն կազմուած պատգամաւորութիւն մը ներկայացաւ իրեն՝ աղբստելով և պաշտօնելով որ զիրենք ազատէ իրենց կառավարիչէն, ինչ միամտութեան։ Այս մարդիկը ամեն վտանգ աչք առած՝ յանգրկեցին պատգամաւորութիւն մը կազմելոյս գընելով կովկասի ընդհանուր կառավարիչ արդարագատութեան զգացումի վրայ։

Ո՞վ է տեսեր բանակալ ընթացի մը տակ բողոքել հմեծատրիս՝ մը գէմ, որ անպատիժ է մնացեր։

Բայց չէ՞ որ բողոքը ապստամբութեան ռահիրան է, Իշխան Պալիցիներ ընդունեց բողոքողները կատաղութեամբ յարձակեցաւ պատգամաւորներէն մէկի վրայ, բունեց մօրուքէն եւ գոչեց—«Եթէ անգամ մըն ալ համարձակիք գալ բողոքել, ձեզ բողոքի գալ Սիբիր կուղարկեմ»։ Այս ըսելով ան թիֆլիս վերադարձաւ և խեղճ ժողովուրդը նորէն իր յուսահատութեան մէջն ինկաւ։ Եւ անհայտ լիսի 25ին աներեւոյթ և վրիժառու ձեռք մը վերջ տուաւ այս մարդու կեանքին, որ կը կարծէր իր ձեռքին մէջ անյաղթելի ոյժ մը ունենալ, ժողովուրդական վրիժառութիւնը այս թըշուառականի վերաբերմամբ աւելի քան իրաւացի էր։

Այս էր միակ վախճանը։

Այս քաղաքական սպանութիւնը վերջինը պիտի ըլլայ։ Ի հարկէ ո՛չ, ինչպէս դէպքերը ցոյց կուտան։ Իգտիբի գեղեցիկ քանի մը օր յետոյ Հին Նախիջևանի մէջ, նոր աներեւոյթ ձեռք մը ժողովրդական վրիժառութեամբ զինուած, ատրճանակի հարուածով մը սպաննած է կառավարչի մէկ կրթակալը, որ հոշակաւոր էր դարձած իր մատնութիւններով ու անգլխութեամբ։

Արգարտագատը իր զոհը ուրբերուն տակ փռելէ յետոյ, ատրճանակը օդի մէջ պարպելով, ամբոխի միջով իրեն ճամբայ կը բանայ և կանհետանայ։ Ուրիշ շրջաններու, ուրիշ քաղաքներու մէջ երեւան պիտի գան այս արդարագատութեան ախոյեաններէն ուրիշները և պիտի շարունակեն վրիժառութեան այս արիւնոտ գործը, որու համար արդէն այնքան հերոսազանութիւններ ցոյց տուին։ Պէ՛հ զէ՛ի ընթացի, կրկնուած Պալիցիներով,

կովկասը ողողեր են պղտիկ Պէ՛հ զէ՛ններով ու պղտիկ Պալիցիներով որոնք թունաւորած են հայ ժողովուրդի գոյութիւնը, և գըժբաղղաղար այս ոճրագործները առատ նիւթ կուտան ժողովրդական արդարագատութեան գործին։

Չարհուրած, իշխան Պալիցիներ որ հոկտեմբեր 14ի սպանութեան փորձէն արդէն կատարելապէս ստրատիւմ էր, Պետերսբուրգ փախաւ իր ամենակարող տիրոջ՝ Պէ՛հ զէ՛ի պաշտպանութիւնը խնդրելու, բայց փոխանակ ապաստանի անոր գիտակի մասերը գտաւ շաղախուած փողոցի փոշիներով... (Pro Արմենիա)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Տարտանել 6 յուլիս 1904

Այս նամակովս նորէն պիտի զբաղուիմ Տարտանելի մէջ պատահած ամենօրեայ անգութ անարդարութիւններով ու բարբարոսութիւններով, որոնց որովայնէ ընտրեալ զոհ մըն է դարձեր հայը, և անտարակոյս է թէ՛ այս ողջակիզումը պիտի շարունակուի քանի տարտանելցի հայը ստրկաբար պիտի տանի այս անլուր և տմարդի հալածանքները բողոքի փոխարէն Սուրմալի որդնտուած կեանքի համար աղօթքներ ընէ։

Ամսուս 20-ին քաղաքիս բնակիչներէն մէկը կ'երթայ մասվաճառի մը խանութ և մէկ օխայ միս գնելով արձաթ մէճիթիցէ մը կուտայ, մաս գործն ալ երեք քառորդը (15 դրուշ) ետ առած միջոցին յաճախորդը կը տեսնայ որ այդ գրամները բոլորովին աւրուած են, և ո՛չ մէկ տառ կամ նշան մնացեր է այլեւ անոնց երեսներուն վրայ, ուստի և կը խնդրէ որ իրեն ուրիշ գրամ տրուի։ Ի՞նչ մարդը այս ըսելը կը գիտնայ, անհասկանալի է որ կը տեղան երեսին, Ուրիշ թուրքեր ալ օգնութեան հասնելով լաւ մը ծեծելէ յետոյ կը յանձնեն ոստիկանութեան, որ զայն կը տանի պէլէտիէն։ Պէ՛հ տիէ՛ի ընթացի, Մէ՛հ զէ՛ն է քիչնտի անուանուած շուքը անարգական քննութիւն մ'ընելով

որ խորունկ սարսափ մը այս մարդիկը գրաւեր էր, և ամէն անգամ երբ խօսելէ կը դադարէի, ականջները կակէին հեռուները լարուիլ։ Այլևս յոգնած այս սպուռ երկիր գնեցող հանդիսատես ըլլալէ, յայտնեց որ պատկիլ կուզեմ, երբ ծերուկ անտառապահը յարկարծակի ոտուով մը բրաւ, նորէն հրացանը ձեռք առաւ ժողովուրդ մը կակազեցով ունա՛, անհ եկա՛ւ։ Երկու կիները ծուռիկ եկան երեսներն ծածկելով, տղաքները կացիններն օտին, ևս զիս կը փորձէի զանոնք հանգըստացնել, երբ քնացող շուքը մէկէն ի մէկ արթննալով գլուխը վերցուց, վիզը երկնցոյց, աչքերը յարեց մարդ կրակին ու արձակեց այն թախձալի աղաղակներէն մին, որ ձամբողքը կը սարսուցնէ զիզին մէջ, երկնցան գէմ։ Բոլոր աչքերը անոր ուղղուեցան, ալ անշարժ կը մնար, թաթերուն յենած, կարծես տեսիլք մը կը յաճախէր միտքը ու սկսաւ ու-

նալ գէպի անձանօթ եւ անտեսանելի բան մը, անշուշտ, որովհետեւ իր ամբողջ մտքըրը ցցուեցան Անտառապահը ստգոյն, աղաղակեց, Ան ալ կըզգայ, ան ալ կըզգայ, ան ալ հոն էր երբ ուղաննեցի»

Ու երկու կիները, մոլորին սկսան շուքին հետ ոռնալ, երկուքն ալ Հայառակ ինձի, խոր սարսուռ մը ուսերէս վար սահեցաւ։ Կինդանիին այս տեսիլքը նոյն ժամուռն այս խելակորոյս մարդոց մէջ, զարնուրիթ բան էր։

Այն ատեն, ժամը ճիշդ, շուքը ոռնայ, առանց շարժելու տեղէն, ոռնայ երազանքի մը անձկութեան մէջ ինկածի պէս, ու վախը, ստրատիկի վախը իմ մէջս մտաւ, վախ, բայց ինչէն։ Գիտե՞մ։ Վախ էր զգացածս, անհ այնչափ։

Անշարժ, ստգոյն կը կենայինք, սպասելով անաւոր գիպուածի մը, ականջին լարած, սրտերնիս բարախուն, ամենապարզ աղմուկէ մը յե-

ղաղջուելով, Շուքը սկսաւ դառնալ սենեկին մէջ, պատերը հոտուտաղով ու միշտ հեծելով, Այս կենդանին կը խենթեցնէր մեզի, Այն ատեն զիս բերող գիւղացին անոր վրայ նետուեցաւ, կատաղի սարսափի մը զայրոյցքին մէջ, ու բակին վրայ նայող փոքրիկ դուռ մը բանալով կենդանին դուրս նետեց։

Շուքը խկոյն լուց ու մնք ալ անի սարսուռեցուցիչ լուրթեան մը մէջ ինկանք։ Յանկարծ ամենքս մէկ ընդոտ կանգնեցանք, բան մը դուրսի պատին տակէն դէպի անտառը կը սալէր, յետոյ տուռն անցաւ, զորս կարծես բունեց վարանոտ ձեռքով մը յետոյ երկու վայրկեան բան մը չի լուսեցաւ, յետոյ նորէն եկաւ միշտ պատերուն քարտուելով, թեթեւ օրէնքերից զայն, ինչպէս պիտի ընէր փոքրիկ տղայ մը իր եղունքներով։ յանկարծ գլուխ մը երեւցաւ դռան քովի քառակուսի պատուհանէն, ճերմակ գլուխ մը լուսաշող աչքերով չէ-

կայծեամի պէս։ Իր բերնէն ձայն մը ելաւ, անոյս ձայն մը, աղերսող միմունջ մը կարծես։

Այն ատեն խոհանոցին մէջ սոսկալի աղմուկ մը պայթեցաւ, Երեսներն անտառապահը կրակ ըրած էր։ Անմիջապէս իր տղաքը խոյացան, պատուհանը փակեցին մեծ սեղանը առջեւ բերելով։

Կերպարան ձեզի որ հրացանի պայթիւնին ձայնը լսելով, որուն չէի սպասեր բնաւ, այնպիսի տագնապ մը զգացի սրտի, հոգիի ու մարմնի, որ մարտիլք եկաւ վրաս, վախէն մեռնելու դրութեան մէջ։

Մինչեւ արշալոյսը հոն մնացինք, շարժելու անկարող, առանց բառ մը արտասանելու, անպատմելի խելատութեամբ մը գալարուէ։

Տան մուտքի պատնէշը ա՛յն ատեն միայն համարձակեցան քանդել, երբ քարի մը ճեղքուածքէն նշմարեցին առաւօտեան նուրբ ճառագայթ մը։

Պատին տակ դռան դէմը ծեր շուքը փոռած էր, ցտակը խորտակուած հրացանին գնդակէն... Կի Տը Մորասան

կը դատաւորուէ զայն չորս ոսկի տու-
գանքի: Մարդը 3-4 ժամ ստակալի
զրուեթեան մէջ բանտ նստելէ յետոյ,
ստիպուած կը վճարէ պահանջուած 4
ոսկին և կազատի:

Այս հայը, դժբաղդարար մէկն է
այն շատերէն: որ կարմիր-Գազանի
կեանքի համար ազօթելը քաղաքա-
ցիական և որդիական պարտք մը կը
նկատեն, իսկ հայ յեղօփոխականներն
ալ իրենց բարբոթութիւնն ու հանգիստ
ընդունելու աւագակներ կրնաւ նին:
Մեր այս խեղճ համազգայինները և
րեւի միշտ կը մտնան թէ՛ օձը ա-
մէն տեղ օձ է, և թէ՛ ան քիչ մը
տաքնալուն կսպասէ, որպէս զի իր սո-
վորութեան համեմատ խայթէ մէկը,
հոգ չէ թէ այդ մէկը իրեն տաքնոզն
ըլլայ: Դեռ ասոնք չը հասկցան թէ՛
հանգիստ և արդար պայմաններու
տակ ապրելու համար, պէտք է ան-
պատճառ ազատ ըլլալ թուրքական
վայելի լուծէն: Արդեօք ե՞րբ տար-
տանելցիք ալ իրենց ձայնը պէտք է
խառնեն ընդհանուր հայկական ար-
դար բողոքի ձայնին: Արդեօք ե՞րբ
տարտանելցիք ալ հպարտութիւնը
պէտք է ունենան հայկական ազա-
տագրութեան կուռի մէջ ընկած գին-
ուորներուն մէջ նաեւ իրենցները թը-
ուելու: Ոչ, սիրելի եղբայրներ, սը-
խալ է և կորստաբեր այն ճամբան,
որու վրայ զուք կեցած էք, և որով
կը յամառիք առաջանալ: Գանի գեռ
չէ՞ք: Թուրքացիք կամ ոչնչացիք
կանգնեցէ՛ք կէս ճամբին, և զէպի
Մայր-Հայաստան, զէպի արիւնտ
պայքարները կարկանդակէք ձեր բա-
զուկները, որոնց այնքան պէտք ու-
նին ողջակեզուած ժողովուրդի ա-
նունով կուռոզ հերոսները:

Բայց կրկին դառնանք մեր քաղա-
քի առօրեայ հետաքրքիր անցքերուն:
Ամսուս 25-ին գերմանացի մու-
րացկան մը կը ձերբակալուի և ու-
տիկանութեան կողմէ կը հարցաքնն-
ուի անոր որտեղէն գալը և ի՞նչ ը-
նելը: Գերմանացին ալ աս հարցում-
ներուն վրայ բարկանալով, դուրս
կ'ելլայ և կը յայտարարէ — բաժար-
ձակ կերպով ձեզ լսեմ թէ՛ մօտիկ օ-
րէն անցիրական և ամերիկեայ գրա-
հաւորներ պիտի գան Տարտանելը
ամբակոծելու, և ձեզ բողոքի ու
ընդմիջտ կրկին երեսէն ջնջելու, ո-
րովհետեւ Հայաստանի և Մակեդո-
նիոյ մէջ ըջած ձեր գաղափարներն
նիւր պլանս երկինք կը բողոքեն: Ա-
ւստրիական նամակատան գրան առ-
ջեւ պոռալով թուրքերը կը յարձա-
կին ասոր վրայ և գոյն բռնելով ձեռ-
քերը կապած կը աննին կառավարու-
թեան դուռը, տեղիս օրայ փառասի
հաճի Ահմէտ պէյին: Խնդիրը ասոր
կողմանէ նորէն կը հարցուի, գերմա-
նացին սաստիկ զայրանալով կը գո-
ռայ թէ՛ ես անօթի եմ ինձ փոխա-
նակ հայ և կերակուր տալու յիմար
հարցումներով զիս կը ձանձրացնէք:
Այս բեկով ձեռքերու կապը կը կը-
տըրաւ և գետնէն քար մ'առնելով կը
նետէ մնձէտ փառայի գլխուն, որ
դժբաղդարար կը վրիպէ: Ատոր վրայ
գերմանացին կը տանին բանտ: Լուր
կը տրուի հիւպատոսարանը, և հիւ-
պատոսը անմիջապէս գալով բաւա-
կան վիճաբանելէ յետոյ կը յաջողի
վերջապէս մարդը բանտէն ազատել:
Այս միջադէպը ահագին ազդեցու-
թիւն է թողեր ամենքին վրայ: Գեր-
մանացիի այդ խիզախ յայտարարու-
թիւնները, եթէ հայ մը համարձակեր
ընել, Աստուած իմ, արդեօք ի՞նչ
ստակալի մահով պիտի լռէր նոյն

վայրկեանին, թող լաւ տեսնեն տար-
տանելցիք թէ՛ ի՞նչ կը նշանակէ ու-
ժը, թէ՛ նա ինչ հրայքներ կը գործէ
նոյն բռնակալ պետութեան մէջ, ո-
րու անուրը հպատակներու վրայ
սարսուռ կը տարածէ:

Անկասկած ենք որ, եթէ տարտա-
նելցիք քիչ մը սկսին շրջահայեաց ըլ-
լալ, իրենց շուրջը ամէն ժամ կա-
տարուած անարդարութիւններն ու
բարբարոսութիւնները քիչ մը քըն-
նուցեալ անեն, պիտի համոզուին
անպայման թէ՛ իրենք երկրի մը մէջ
կապրին, ուր մայրաքաղաքը և վայրենի
կամայականութիւնը իբրեւ օրէնք կը
ձառայէ, ուր իրենք գոյութիւն ու-
նին մի միայն իրենց պատուով ու ըս-
տացուածքով իշխողներու քմահաճոյք-
ներուն ծառայելու: Եւ երբ այս ող-
բալի իրողութիւնը վայրկեան մը
համեմատեն ազատ կառավարութիւն-
ներու բնակիչներու գրուած նետ,
իրենք են որ ինքնաբերաբար բողոքի
ձայնը պիտի բարձրացնեն, իսկ անոնց
մէջէն աւելի քայլերն ու ընտրեալնե-
րը զէնք պիտի բարձրացնեն այն
կեանքին զէմ, որու համար ազօթել
ստրված էին իրենց սարուկ և ազէտ
հայրերէն:

Թղթակից

ԽԱՉԻ ԵՒ ԿԻՍԱԼՈՒՍԻՆ ԵՐՈՒՆԻԱԿ
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅՅԵՐԸ ՈՉԸՉԱՍՏՆԵԼՈՒ ՀՍՄԱՐ

—(0)—
Այս վերնագրով պուկարական
«Վեչերնա Իւզիմա» կ. Պոլսոյ
յատուկ թղթակիցը հետեւեալ
նամակն է գրեր:

— «Թիւրքիա երբէք չի պիտի
ունենար քրիստոնեաները կոտ-
րելու յանդգնութիւնը, եթէ մէկ
մեծ պետութեան կանխակալ քա-
ղաքներու թիւնը չունենար: Ռու-
սական կառավարութեան ըրած
կարգադրութիւնները իր հիւ-
պատանքներուն հայերու հետ այն-
պէս վարուելու, ինչպէս հրէա-
ներու հետ, այսինքն մերժել
թող տալ անոնց մուտքը Ռու-
սաստան, ատիկա քաջալերու-
թիւն մըն է, և ազգայնաւ մը
թիւրքիայի վերականգնուի իր գա-
ղանութիւնները հայերու նկատ-
մամբ: Այստեղի հայերը նախա-
տեսելով այդ գեռ հիմակուրէն,
գլխաւորապէս հարուստները ո-
րոշեր են բաւակօնին մեծակ
գումարներ յայտնի բէյերուն,
որպէս զի անոնք կոտորածի մա-
մանակ զիրենք պաշտպանեն:
Ռուսաստանը հակառակ է թուր-
ք-ամերիկեան այժմեան համա-
ձայնութեան, որովհետեւ ատով
Ամերիկայի իր պաշտպանութեան
տակ կառնէ ամբողջովին ողջա-
կիւղումի համար սահմանուած հայ
ազգի քանի մը անհատները, եւ
ատոր դէմ պիտի բողոքեն, և
թէ պայմանները իրեն ներքին
Ամբողջը կը հաւատան թէ՛ Ռու-
սաստանը դժոխային բան մը կը
պատրաստէ հայերու համար »

ՊԼԵՂԷԻ ՍՊԱՆՆՈՂԸ

Ս. Պեան բարբառով կը հայտարար-
են «Պէրլինէր Թակէպլատ»-ին—
«Ոստիկանութեանը յաջողուցաւ
Պլեղէի սպաննողը հաստատել:
Ընտր անունն է Սազանով, Մոս-
կովայի հին ուսանող մը, Ստրա-
տովի նահանգէն փայտափաճառի
մը որդիք: Մինչեւ հիմակուսն
խուզարկութիւնները սպացուցին
Սիկստոկի մասնակցութիւնը այդ
դաւազութեան, որ նոյն այդ-
օրը ինչ որ խորհրդաւոր սուփ-
մըն էր ձգեր նէվա գետի մէջ:
Ընդհակառակը երրորդ ձեռքա-
կալուածը՝ Պրասնիշէյն, որ
թէպէ՛ք քաղաքական յանցանք-
ներու մէջ մեղադրուած մէկն է,
սակայն գեռ չեն կրցած փաստ
մը գտնել ասոր դէմ այս դէպքի
մէջ ալ մասնակցած ըլլալու առ-
թիւ »

ԿՐԻՏԷ

«Լը Բըթի Պլէօ» թերթը Ա.
թէնքէն թղթակցութիւն մըն է
տպէր, ուր կը նախազգացուի
կրէտացիներու մօտալուտ սպա-
տամբութիւն մը՝ թօթուելու ի-
րենց վրայէն թրքական գերիշ-
խանութիւնը եւ միանալու Ռու-
սաստանին: Այս շարժումը կազ-
մակերպուած է շատանցուրէն ազ-
քատ ուսուցիչներու, հոգաբարձ-
ներու եւ վաճառականներու ձեռ-
քով: Գանի մը շարժ կայ, և
պտտամբութիւնը պայթելու էր,
երբ Նիլիալ-Քասի գիւղացի-
ները յարձակեցան քաղաքատան
վրայ և թրքական զօրջակը վեր-
ցուցին՝ տեղը յունականը բար-
ձրացնելով, բայց գլխաւորները
մտածելով թէ գեռ ռոպէն չէ հա-
սած, խուճըր ցրուեցաւ, մեծ
մտով Յունաստան երթալով:

Ետաջիկայ պայտամբութիւնը
չառ հաւանական կերեւալ, որ
կրէտէի Գէորգ իշխանը մտադիր
է եւրոպական գլխաւոր արքու-
նիքներն այցելել՝ ցոյց տալու
համար իւրու վտանգաւոր դրու-
թիւնը, որով կրնայ ինքը ստիպ-
ուած ըլլալ այնու թողնել իր
Հերմաստատի (կառավարիչ) պաշ-
տօնը: Այս ամիս 28ին ան պիտի
մեկնի: Յունաստանի մէջ շատ
յոռետես են աս ճամբորդութեան
հետեւանքներու նկատմամբ, եւ
կը մտածեն թէ՛ եւրոպական գի-
ւանագիտութիւնը շատ տարուած
է ռուս ճարտական պատերազմով
որով և չը պիտի կրնայ զբաղուիլ
կրէտէիով:

ԹԱՆ

ՅԱՐԻՆ ՄԱՆԻՅԵՍԱՐԸ

Պ. Հ. գ-ը կը հեռագրէ Պեան բա-
բարդէ՛
— «Ե՛ծ իշխան թագաժառանգ
Ալեքսէյի ծննդեան պատճառով՝

Յարի ստորագրած մէկ ներման
թղթի հիման վրայ, գիւղացի-
ները, ցամաքային և ծովային
զիւրուարները մարմնական պա-
տիժէն կազատուին: Եւ յառա-
րեան մէջ ընկած գիւղացիներ-
ուն կը ներուի իրենց վրայ մը
նացած անվճառ տուրքերը: Այն
անձինք, որոնք բռնուած են քա-
ղաքական յանցանքներու մէջ,
և իրենց օրինաւոր են պահած,
պատիժները աւարտելէ յետոյ
և արդարապատութեան նախա-
բարի ցոյցումներով, պիտի փ-
րբատան իրենց քաղաքացիա-
կան իրաւունքները: Գաղափար
այն յանցարեւոյթները, որոնք 10
տարիէ սկսած մինչեւ թօգաժա-
ռանգի ծնունդը անձանթով են մը
նացած, պատժի կրճատման կ'են-
թարկուին: Եւ այն քաղաքական
յանցարեւոյթները, որոնք արա-
սահման են փախած, և կրկին
Ռուսաստան վերադառնալ կը ջան-
կան, կարող են թօյլուութիւն
խնդրել:

Հրէական այն բնութիւնները
որոնք չեն մասնակցած զինուո-
րագրութեան, այդ առթիւ ու-
նոնց համար սահմանուած պատի-
ժը անգործադիր կը մնայ:

Կառավարչական յայտնի պաշ-
տօնեաներու Յարը զանազան յը-
քանչաններ է պարգեւեր: Նաեւ
ներքին պիտի շնորհուի մասնա-
րոպէս ծովային և ցամաքային
զինուորական յանցարեւոյթներու:

ՊԱՏԵՐԱՉԻՆ ԾՈՒՐՁԸ

Պ. Հ. Գ-ը հետեւեալները կը
հեռագրէ:

Լօնտօն.— «Ռէյտսբուր» գործա-
կալութիւնը Թօթիօն կը տեղե-
կացնէ թէ՛ «Սեպտաստրոյ» զը-
րահարը երեքշաբթի օր Պորտ
Արթուրը ձգած միջոցին՝ սկա-
նի մը հանդիպել է, որով ստի-
պուած է կղեր կրկին նաւահան-
գիստ գտնուիլ:

Զիջու.— Զինական նաւակ մը
որ Լիւստեշտին ծոցը օգոստոսի
8/21ի գիշերն է թողեր կը հարթ
գէ թէ՛ ճարտնացիք իշին բլուրի
վրայի ամբուլութիւնը, ինչպէս նա-
եւ ուրիշ ամբուլութիւններ, որոնք
միայն կէս մղոն արեւելեան կող-
մէ հեռու են վերջինէն, արիւր
են: Դաշալ վրայ գտնուած սու-
սական զօրքը ես են մղեր, և
Չաս—Չանկլաօի վրայ բարձրաց-
ուած ամբուլութիւնները կործա-
նելու: Գրեթէ բոլոր շինութիւն-
ները Պորտ Արթուրի մէջ զիս-
ուած են: Գաղափարները բոլոր-
ովին աւերակ է դարձած: Պա-
տերազմական շորս մեծ նաւեր
կոտի անընդունակ են դարձեր:

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница «Важность» Варна